Մրցույթի հայտարարություն
<<ՀՀ Արարատի մարզի Արալեզի միջնակարգ դպրոց>> - ՊՈԱԿ-ում
Տնօրենի թափուր պաշտոն զբաղեցնելու համար

ՀՀ կառավարության 2010 թվականի մարտի 4-ի N 319-Ն որոշմամբ հաստատված՝ պետական հանրակրթական ուսումնական հաստատության տնօրենի ընտրության (նշանակման) կարգի 6-րդ և 7-րդ կետերի համաձայն՝ << ՀՀ Արարատի մարզի Արալեզի միջնակարգ դպրոց>> - ՊՈԱԿ-ի

Կառավարման խորհուրդը հայտարարում է մրցույթ՝ հաստատության տնօրենի պաշտոնի թափուր տեղ զբաղեցնելու համար:

1. Հաստատության տնօրենի պաշտոնի համար անցկացվող մրցույթին մասնակցելու պարտադիր պայմաններն են՝

1) ՀՀ քաղաքացիությունը.

2) ուսումնական հաստատության ղեկավարման իրավունքը (հավաստագիր):

2. Մրցույթին մասնակցելու համար հավակնորդը ներկայացնում է՝

1) դիմում՝ հաստատության խորհրդի նախագահի անունով.

2) Հայաստանի Հանրապետության քաղաքացու անձնագրի կամ նույնականացման քարտի պատճենը.

3) հաստատության ղեկավարման իրավունքի հավաստագրի պատճենը.

4) տվյալ հաստատության զարգացման ծրագիրը թղթային և էլեկտրոնային տարբերակներով.

5) ինքնակենսագրություն:

Փաստաթղթերի պատճենները պետք է ներկայացնել բնօրինակների հետ:

Փաստաթղթերն ընդունվում են Արարատի մարզի << Արալեզի միջնակարգ դպրոց >> ՊՈԱԿ-ում , 2022 թվականի մարտի 31-ից մինչև ապրիլի 20- ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 9^{00} – ից մինչև ժամը 15^{00} - ն, բացի հանգստյան (շաբաթ, կիրակի) և օրենքով սահմանված ոչ աշխատանքային՝ տոնական և հիշատակի օրերից:

Մրցույթը տեղի կունենա 2022 թվականի մայիսի 4-ին՝ ժամը 15^{00}-ին, << ՀՀ Արարատի մարզի Արալեզի միջնակարգ դպրոց>> ՊՈԱԿ-ում, Արարատի մարզ, գ. Արալեզ, Հ. Թումանյան 10:

Տեղեկությունների համար դիմել՝ Լուսինե Հարությունյանին (հեռ-094-70-01-08, gmail- harutyunianlusine.1971@gmail.com